մեկնեցաւ յԵրուսաղէմ ուրախութեամբ և սիրով՝ հանդերձ իւրովքն ընդ ուխտաւորս տարեոյն 'ի կողմանս Աքքէի, ուր եգիտ բազում մեծարանս 'ի ձէզար Փաշայէ։ Հոգաց Թէոդորոս զծախս ճանապարհին եւ զկաթուղիկոսական պարգեւսն. (1803, 'ի 4 Յունվարի)։ Ցընծայսն, զոր առաքեաց Թէոդորոս առ Յովհաննէս Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ նշանաւոր է պատուական մատանին յակինթ քարամբ (կեօք եադութ. տամլայ), որ կարի սիրելի էր ինքեան Թէոդորոսի։

Իսկ 'ի սաստկանալ սովոյն եւ նեղութեան 'ի քաղաքն Յոպպէ՝ փախեաւ փոքր նաւակաւ իւրովքն հանդերձ Մէհէմմէտ Փաշա Ապու Մէրրադ և եհաս 'ի Բերիա և անտի 'ի Տիգրանակերտ (յ2 Փետրվարի)։ Բարձաւ պաշարումն և բացան դրունք քաղաքին, եւ ազատեցան բնակիչք 'ի նեղութենանց եւ 'ի տառապանաց։ Ջերծեալ անտի եկին յԵրուսաղէմ տեսուչք վանօրէից՝ Հայոց, Յունաց եւ Լատինաց, և պատմեցին զանտանելի տառապանս և զաշխատութիւնս իւրեանց 'ի գործ պատերազմին գանիւք, հարուածովք և նախատանօք, զորս կրեցին ինքեանք և ժողովուրդք 'ի ձեռաց բռնաւորին այնմիկ. զյափշտակութիւն և զբռնի պահանջումն դրամոց, որոյ միայն տուեալ էր Ղազար վարդապետ 200 քսակ, առեալ տոկոսեօք աստի եւ անտի. եւ զսաստկութիւն սովոյն, մինչեւ ուտել բնակչաց զմիս դրաստուց եւ այլոց անասուրբ կենդանեաց զաւուրս 20, և զսերմն բամբակի խառնեալ ընդ ալրս և ընդ արիւնս անասնոց եփեալ ուտէին փոխանակ հացի, և զայլ քստմնելի իրս՝ զորս ոչ տանեն լսելիք 'ի պատմելն։ Յերեսաց պատերազմին քայքայեցան բազում տեղիք։ Տեսուչքն Յունաց և Լատինաց հասեալ յԵրուսաղէմ կընքեցին զկեանս իւրեանց 'ի լկանաց անտի. իսկ Ղազար վարդապետ թէեւ տկար՝ վերստին դարձաւ 'ի Յոպպէ, յորդորանօք Պատրիարքին։ Սակայն պարտքն Յոպպէի կուտեցան 'ի վերայ Թէոդորոսի՝ զոր սկսաւ վճարել նեղութեամբ և տառապանօք, թող զտարեկան սահմանեալ տուրս և զայլ պահանջս այլազգեաց և Բդեշխից, որոց 'ի հատուցանելն կրէր բազմօրինակ վիշտս։ Յեկեղեցին Ս. Աստուածածնի 'ի ձորն Դեթսէմանի տեսուչն Յունաց